



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» հունիսի 2017 թվականի N 54 ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱԿԱՐԳՎՈՂ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 125 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N:1792-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կանոնադրության» 16-րդ կետի դրույթներով.

1. Հանձնարարում եմ՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Սեյրան Պետրոսյանին՝ համակարգել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատանքները քաղաքաշինության, կրթության, մշակույթի և սպորտի, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների համագործակցության, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բնագավառներում,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Հարություն Արշակյանին՝ համակարգել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատանքները գյուղատնտեսության և բնապահպանության, առողջապահության և սոցիալական ապահովության, հողաշինության և հողօգտագործման, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառներում,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Խաչատուր Վարազյանին՝ համակարգել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատանքը զարգացման ծրագրերի և վերլուծության բնագավառում:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալների կողմից համակարգվող բնագավառները սահմանելու մասին» N:125 կարգադրությունը:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

